Դատաստանագրքում խոսվում է նաև գատավարության մեկ այլ ձևի մասին, երբ գործը քննելու համար դատավորներ կամ, ինչպես Դատաստանագրքում է ասված՝ «վճռահատներ» են ընտրում կողմերը կամ նշանակում են դատավորները։ Դատավարության այս ձևը իր բնույթով մոտ էր ժամանակին Ռուսաստանում գործող третейский суд-ին։ Եթե վճռահատների կայացրած վճռից կողմերը սկզբում գոհ են լինում, բայց հետագայում պարտավորյալ կողմը բողոքում է դատավորներին վճռի անարդարացի լինելու դեմ և հրամայվում կատարել այն, դատավորները իրավունք չունեին գործը նորից քննելու և փոխելու վճռահատների կայացրած վճիռը, ընդհակառակը, նրանք պետք է ստիպեին, որպեսզի բոզոքող կատարեր իր պարտավորությունը, որովհետև ըստ Դատաստանագրքի, «...թերև հաճությամբ և հաւանությամբ կամայ իւրոյ է բնտրեալ զնոսա, պարտի զի լինիցի հնազանդ գատողութեան նոցին...» (մասն Դ, գլ. 14, հոդ. 21)։

Ատրպատականի հայկական ռատհաուզի ֆոնդում եղած նյութերում հանդիպում ենք փաստաթղթերի, որոնք վկայում են, որ Դատաստանագրքի այս պահանջը ևս իրականացվել է։ Հանգամանքներ լուծելու համար ռատհաուզին դիմելու փոխարեն կողմերը ընտրել են վճռահատներ, որոնք քննել են գործը ու կայացրել վճիռ։ Այսպես, օրինակ, հայ վաճառականներ Ի. Թոմազևի և Մ. Մաֆարովի միջև եղած վեճը լուծելու համար նրանց համաձայնությամբ գործը հանձնվում է վճռահատների։

Դատաստանագրքի ամբողջ ոգուց երևում է, որ գատավարությունն ընթացել է բանավոր։

Դատաստանագրքից միաժամանակ երևում է, որ գատավարությունը տեղի է ունեցել գրչփակ։ Այդ երևում է առանձին հոդվածներում եղած անուղղակի հիշատակություններից[34]։ Ընդհանրապես Դատաստանագրքի ուսումնասիրությունը մեզ հանգեցնում է այն եզրակացության, որ գատավարությունը ընթացել է գրչփակ, իսկ դատավճիռը շատ անգամ ի կատար է ածվել հրապարակորեն։

Ատրպատականի Դատաստանագիրքը եղել է գործող օրենսգիրք, նրանով ղեկավարվել են սկզբում Ատրպատականի, այնուհետև Ղզլարի և Մոզդոկի հայկական հատուկ դատարանները, ինչպես նաև Նոր-Նախիջևանի հայկական մագիստրատը։

Ֆ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՇԱՐԱՑԱՆ ՍԻՍՏԵՄԸ ՎԱՆԱ ԼՃԻ ԱՎԱԶԱՆՈՒՄ

Վանա լճի ավազանը մի բացառիկ երկրամաս էր, որտեղ անցյալում կար երաշտի դեմ պայքարելու մի հիանալի դաշտամշակության եղանակ՝ շարացան սիստեմը։ Այս սիստեմի միջոցով մշակվում էին միայն աշնանացան ցորեններ։ Հատիկները խնամքով թաղվելով ակոսի մեջ, բավարար սնուցում էին ստանում, սերմի անտեղի կորուստ չէր լինում։ Ծլող հատիկն ու բույսը լավ էին գիմանում երաշտին։ Երբ անջրդի շաղացանի ցանքերը երաշտից չորանում էին, շարացանից բավարար բերք էր ստացվում։ Շարացան սիստեմը Վանա լճի ավազանում և կոգովիտում հայտնի էր տիր դնել (ոմանց մոտ՝ դիր դնել) անունով։

Վանա լճի ավազանի բարբառներում ու խոսվածքներում տիր բառը նշանակում էր ակոս, ծիր։ «Տիր գնել» նշանակում էր ծիր բաշել, ակոսել և ծիր-ակոսի մեջ ձեռքով ցորեն ցանել, շարացան կատարել։ Իսկ Գնունիքում (Թիմար) կար տիր (դիր) անունը կրող կարմրահատ ցորեն։

Ինչպես ցույց են տալիս 1958 թ. մեր գիտական արշավի միջոցին ձեռք բերած նյութերը, տիր գնելու սիստեմը տարածված է եղել Բզնունիքում (Խլաթ)[1], Խորխոռունիքում (Արծկե)[2],

---

34 Դատաստանագիրք (ձեռ. 7383), մասն Բ, գլ. 12, հոդ. 2։

1 Նյութերը 1958 թ. պատմել է Խլաթի Տափավան գյուղացի, 1885 թ. ծնված, այժմ էջմիածնարնակ Հայրապետ Սերորի Հարությունյանը։ Նա շինել է տրի խառոռի մոդելը (տե՛ս ՊՊԹ, ազգագրական ֆոնդ, 7446)։

2 Նյութերը 1958 թ. հաղորդել է Արծկեի Այգեձոր (Էգեձոր) գյուղացի, 1888 թ. ծնված, այժմ էջմիածնարնակ Հմայակ Մելիքի Սաֆարյանը։ Նույն գավառի Բարկատ գյուղացի ծերունի Պողոս Պետրոսյանը, որ այժմ ապրում է Աշտարակի Զորավ գյուղում, 1959 թ. մեր պատվերով պատրաստել է Արծկեի բոլոր գյուղատնտեսական գործիքներն իրենց բնական չափերով, այդ թվում նաև տրի խառոռի կոմպլեքսը։

Արճիշակովիտում (Արճեշ)[3], Գնունիքում (Թիմար)[4], Բերկրիում (Առրերանի) և Կոզովիտում (Բայազետ)[5], Տիր դնելու, շարքացանի արորով շարացան կատարելու վերաբերյալ տեղեկություններն առայժմ վերաբերում են միայն հիշված գավառներին[6]։

Տրի խարոորը (I—1, 10) արտարնապես նման էր վարի իարորին (I—5)։ Առատամը և խոփը բավական կարճ էին և կանխում էին խարորի ցնցումները ուղիղ ակոս ծրելիս։ Խոփի ձևն անսովոր էր. բերանը դրածն. ուղիղ էր (I—1ա, II—2, 3), որպեսզի ակոսելիս հերկի հատակին հարթ հետք թողներ։ Դրանով առատամին միացվող տրի տախտակները (I—1գ, 7և, 8և, 9և) դյուրությամբ էին սահում։ Սահումն ավելի հեշտացնելու նպատակով ունեոր տնտեսությունները տախտակների արտաքին պատերին ձեթ էին քսում։ Մաճի ձևը ևս անսովոր էր. դա առատամին զուգահեռ փայտաձող էր, հաստատված մաճափայտի և Թրի՝ դեպի վեր բարձրացող ծայրին (I—1գ)։ Համը մեծ մասամբ երկու փայտից էր (I—1բ), որպեսզի սա ևս նպաստեր ցնցումները թուլացնելուն։ Թրի դիմաց, աջ ու ձախ կողմերին կային անկաջ կոչվող երկու տախտակափայտեր (I—3, 4, 5), որոնք հողի արտաքին շոր շերտը ցրելու համար էին և որով լայնացվում էին ակոսները՝ տրի տախտակների համար ճանապարհ բացելով։ Դրանք պաշտպանում էին մաճկալի ոտքը, դուրս էին գցում միջակոսային թմբերը, իսկ վերջիններս ցանքն ապահովում էին հավաքվող անձրևաջրով։ Առատամի վերջնամասի երկու կողմերին գամվում էին տրի տախտակները (I—1գ, 7և, 8և, 9և)[7]։ Արկղի ձաղարաձևությունը հնարավորություն էր ընձեռում սերմը շաղ տալ դրա մեջ, շարացան կատարել։

Որոշ գավառներում, ինչպես օրինակ, Թիմարում և Արճեշում, առատամի տակին շատ բարակ, բայց ամուր տախտակ էին մեխում, որով կանխվում էր առատամի ու տախտակների ծայրերի արագ մաշվելը. դա նաև դյուրացնում էր վարը (I—7է, 8է)։ Արորին լծում էին մեկ զույգ գոմեշ կամ երկու զույգ եզ։

Վարի խարորը բավական երկար առատամով (II—5ա), երկար ու սրածայր խոփով (II—5բ), սակավ կոր կամ խիստ կոր պարանոց ունեցող (II—5գ) սովորական արոր էր։ Խլաթում, Արճեշում և Այնթապում արորի համի կրունկը (I—8բ, 9բ) թաղվում էր առատամի ետնամասի (I—8ա, 9ա) վրա փորված փոսի մեջ (I—9բ)։ Այդպիսի խարորից տրի իարոր պատրաստելիս արկղի տախտակներն ամրացնում էին պնդիչներով (I—7գ, 9գ) կամ կամրջող ձողով (I—[illegible])։ Արծկեում, Գնունիքում և այլ տեղերում, ընդհակառակն, առատամն ու համը իրար էին միանում հարթ մակերեսներով։ Ակոսը լայնացնելու ցանկության դեպքում համի և առատամի աջ ու ձախ կողքերին ականջներ էին գամում (II—5գ)։ Մաճը Խլաթում, Արճեշում և Արծկեում նման էր տրի խարորի մաճին (II—5գ), իսկ Այնթապում և Գնունիքում կենտ մաճ էր։ Համը պատրաստվում էր մեկ կամ երկու կտոր փայտից։

Սույն վարի խարորը տիր դնող վայրերում գործածվում էր որպես տրի համար խամ ու խոպան տեղերը գութանից առաջ հերկելու դրծիր, որին լծում էին երկու զույգ եզ կամ մեկ զույգ գոմեշ։

Տրի գութանը (II—6) կառուցվածքով նման էր կորպի գութանին, բայց ձևիչ չուներ, որովհետև սրանով նախապես վարի խարորով հերկածի կրկնավարն էին կատարում։ Խլաթում սա սովորական գութանից բավական մեծ էր. համապատասխանորեն մեծ էին խուրը, առատամը և այլն։ Տրի գութանը գոնելով (անիվավոր) էր։ Լծում էին 3—5 զույգ եզ ու գոմեշ։

Ցաքը երկու թևերի վրա ցախով հյուսվածը ունեցող սովորական տափան էր, որ ծառայում էր թե՛ շաղացանին, թե՛ շարացանին։ Ցաքով հարթում էին արորավարը գութանով կրկնավար կատարելուց հետո, որը շաղացանի համար անսովոր էր։ Լծում էին մեկ զույգ գոմեշ կամ երկու զույգ եզ։

---

3 Նկարագրել է Արճեշ գավառի Բանոն գյուղացի, 1853 թ. ծնված, այժմ էջմիածնարնակ Ավետիսի տղա Ասլո Մկոն, 1958 թ., 105 տարեկան հասակում։

4 Պատմել է Գնունիքի Ալյուր գյուղացի, 1880 թ. ծնված, այժմ էջմիածնարնակ Խրոպոյի Սրվանդը՝ Սրվանդ Փանոսի Խրոպոյանը, 1958 թ.։

5 Նկարագրել է Բայազետի Այնթապ գավառակի Ղզրլ-Ղայա գյուղացի, 1881 թ. ծնված Արշակ Վարդանյանը, 1958 թ. էջմիածնում։

6 Մյուս շրջանների շարացանի մասին կան կցկտուր տեղեկություններ, որ վերաբերում են XIX դ. վերջերին և XX դ. սկզբին։

7 Դրանք ունենում էին 1,5—2 մ երկարություն, 30 սմ լայնություն և 7—8 սմ հաստություն։ Այս երկար ձաղարաձև կիսարկղի ստորին բացվածքը 5—7 սմ էր, իսկ բերանինը՝ 30 սմ.







Պարոր մի գործիք էր, որով նախքան ոռմի ծլումը տրի ցանքի վրա անձրևից հետո գոյացած կոշտ կեղևը փշրում, մանրացնում էին։ Այս ձևը կիրառվում էր այն պատճառով, որ տրի սերմերը կատարելուց հետո հարթեցում չէր կատարվում։ Զանազան գավառներում կային պարոր-փոցխի տարբեր տեսակներ։ Առավել նախնականը, որը մարդն էր քաշում, Արճեշինն էր։ Սա իրենից ներկայացնում էր մի երկար ձող, ծայրին երկու երկաթե մատներ եռանկյունաձև ամրացրած (III—5)։ Գնունիքում այդ նպատակով գործածում էին կամ քոների չիշը (III—4), և կամ արորի համի կրունկի վրա հաստատված մաճի ծայրը տակից սրում, կարճ ատնկ էին դարձնում (III—6ա) և կամ էլ տակից երկու հաստ գամ էին մեխում (III—6բ)։ Արծկեին հայտնի էր երկաթե փոցխի մի տեսակը, որ ուներ 3 ատամ։ Բարկատ գյուղում այն քաշում և փոցխում էր մարդը, իսկ Այգեձորում և այլուր՝ լծկանը (III—1)։ Պայմանն այն էր, որ փոցխի երեք ատամն էլ քարշ գային մի ցանվածք ակոսով։

---

8 Բարկատում այս փոցխը քուշ էր կոչվում։ Փոցխի թաթի երկարությունը 8 սմ էր, հաստությունը՝ 4—5 սմ, երկաթե կոթի երկարությունը՝ 50 սմ, հաստությունը՝ 4 սմ, մատների երկարությունը՝ 3-ական սմ։ Մատները գրաձև էին և սուր կողմերով ուղղված դեպի առաջ։ Կոթով հանդերձ փոցխը կշռում էր 2,5 կգ։

Բարկատի և սրա շրջակա գյուղերի բնակիչներին հայտնի էր այդ նույն փոցխի նոակի մեծ տեսակը՝ 9 մատով, որը 3 ակոս միանգամից էր փոցխում, ըստ որում յուրաքանչյուր երեք տտամբ քարշ էր գալիս մեկ ակոսով (III—2)։ Վերջապես կար այդ գործիքի ամենակատարյալ ձևը, որ Խլաթում հայտնի էր պարոր անունով։ Սա ուներ երեք գլանից բաղկացած գործող մաս. գլանների վրա նախապես պարուրաձև գծեր էին արվում և պողպատե 3 սմ երկարությանը սուր ճանկեր հաստատվում (III—3), ինչպես ճառճառի ուրագները՝ սոնու վրա։ Գլան-պարորները հատուկ քարշակով միացվում էին լծին. եղների ուժով փոցխվում էր երեք ակոս միանգամից։

Տրի մանգաղը (II—4) Խլաթում, Արճեշում և Արծկեում խիստ ճկված ու փակ բերանով էր։ Դա բացատրում են նրանով, որ շարացանը դաստա կազմելիս մանգաղով հավաքելու կարիք չէր լինում, ինչպես հատուկ է շաղացանի հնձին։

Տրի խարոռի լծկաններն էին գոմեշը, որ իր գանդաղաշարժության և հեշտ վարժեցնելու համար նախընտրելի էր, և փորձված եզը։ Հորիկը դրեթե բոլոր շարացան վայրերում առանց հոտաղի էր, որովհետև այն երկար ժամանակ վարժեցվում էր։ Ամոլի համար ընտրում էին տարիների փորձ ունեցող և գանդաղաշարժ, իսկ հորիկի համար՝ երիտասարդ ու աշխույժ եզներ։

Տրի ցանքը կատարվում էր աշնան սկզբին, հետևապես բոլոր ցորեններն աշնանացան էին՝ հետևյալ անուններով. տիր (այս անունը պահպանված էր միայն Գնունիք-Թիմարում), ավետիք (Այնթապ), կարմրխատ (Այնթապ, Արծկե), կես-դոզոն-ուշ կալսվող (Արճեշ), կլորտխատ կամ բոփբոփիկ (Արճեշ), դարա-դրբշրդ-սեակոուբ (Այնթապ, Արճեշ, Արծկե), նրոնայեկ (Արճեշ), սիվտրկխատ (Այնթապ, Արճեշ, Արծկե), ֆոիկ-ֆրուրկ ցորեն (Արճեշ, Արծկե)։ Տրի ցանքը կատարվում էր մեծ մասամբ փափուկ, քար չունեցող ավազախառն և գորշագույն հողերում։

Տրի ցանքի համար հողի հերկումը կատարվում էր մայիսի վերջերին կամ հունիսի սկզբներին, վարի խարոռով (II—5)։ Խարոռի վարի խորությունը պետք է հասներ 23—25 սմ, իսկ որոշ պատմողների հավաստմամբ՝ 30 սմ։ Խարոռավարը փափուկ տեղերում կատարվում էր մեկ անգամ, արտի լայնքով (IV—3Ա), իսկ երկու-երեք տարվա խամ արտը հերկելիս կրկնավար էր կատարվում, ըստ որում առաջինը՝ երկայնքով, իսկ երկրորդը՝ լայնքով։ Խարոռավարին, ըստ ընդհանուր սովորության, ամռան կեսերին հաջորդում էր գութանավարը (IV—3բ)։ Այն կատարվում էր արորավարին հակառակ ուղղությամբ՝ արտի երկայնքով, նախորդից 5—8 սմ պակաս խորությամբ։ Այս երկու վարի շնորհիվ հողում պահպանվում էր խոնավության մի այնպիսի աստիճան, որն անհրաժեշտ էր աշնանացանի սերմերը սնելու համար (տե՛ս գութանավարի ձևն իր կոշումներով, տախտ. IV—1)։ Գութանով կրկնավարն անմիջապես տափանվում էր ցաքով, որպեսզի մակերևույթը հարթվի և գոլորշիացումը դանդաղեցվի։ Այն կատարվում էր գութանավարին հակառակ, որպեսզի հնարավորին չափ ծածկեր ճեղքերը (IV—3—Դ)։

Տրի ցանքն սկսվում էր օգոստոսի վերջերին, կալսոցի ժամանակ։ Որպես ցանքի առաջին օր, ամենուրեք ընդունված էր աստվածածնի պասին հաջորդող երկուշաբթին։ Վարը կատարվում էր տրի խարոռով, գութանավարին զուգահեռ (IV—3—Դ)։

Տրի խարոռի առատամի, համի և թրի առաջացրած անցքը (I—6) Արծկեում և Այնթապում գասեզու (ասպանդակ) էր կոչվում, Թիմարում՝ ախպուր և Արճեշում՝ խազինա։ Վարն սկսելուն պես մաճկալը բարձրանում էր խարոռին՝ այսպես. արտի չվարած կողմը մաճկալի ձախին ընկնելիս, նա աջ ոտքը մտցնում էր այդ ասպանդակի մեջ և հենվում առատամին, իսկ ձախ ոտքը դնում էր խարոռի համի վրա, կամ կախում նրանից։ Այս դեպքում մաճին էր հենվում աջ կողքով (I—10)։ Ընդհակառակն, արտի չվարածը մաճկալի աջ կողմն ընկնելիս՝ նա ձախ ոտքն էր հենում առատամին ու աջով հանդչում համին։ Այս դեպքում նա ձախ կողքով էր հենվում մաճին։ Մաճկալը երկու ձեռքով հենվում էր գոմեշների կամ եզների կոնքերին, ընդ որում որոշ տեղերում առանց վարոցի, այլ տեղերում՝ աջ ձեռքում մտրակը կամ ճիպոտը պահած (I—10)։ Տեղավորման այս ձևը հետապնդում էր աշխատանքի համակողմանի դեկավարումը։

Սովորականից տարբեր էր սերմնացանի աշխատանքի եղանակը։ Ունենալով դոգնոց կամ եռանկյունաձև մի պարկ, որ Խլաթում փաթոց էր կոչվում, նա դրա մեջ լցնում էր այնքան

---

9 Պարորի յուրաքանչյուր գլանն ուներ 120 սմ երկարություն և 10 սմ տրամագիծ։ Պողպատե ատամները, որ երկու ծայրերով էլ ասեղանման սուր էին, մտցվում էին պարորի մեջ և երկու ծայրերը 3-ական սմ դուրս թողնվում։

Բարկատի և սրա շրջակա գյուղերի ռնակիշներին հայտնի էր այդ նույն փոցխի նոակի մեծ տեսակը՝ 9 մատով, որը 3 ակոս միանգամից էր փոցխում, ըստ որում յուրաքանչյուր երեք տտամբ քարշ էր գալիս մեկ ակոսով (III—2)։ Վերջապես կար այդ գործիքի ամենակատարյալ ձևը, որ Խլաթում հայտնի էր պարոր անունով։ Սա ուներ երեք գլանից բաղկացած գործող մաս. գլանների վրա նախապես պարուրաձև գծեր էին արվում և պողպատե 3 սմ երկարության սուր ճանկեր հաստատվում (III—3), ինչպես հաճաճի ուրագների՝ սոնու վրա[9]։ Գլան-պարորները հատուկ քարշակով միացվում էին լծին. եզների ուժով փոցխվում էր երեք ակոս միանգամից։

Տրի մանգաղը (II—4) Խլաթում, Արճեշում և Արծկեում խիստ ճկված ու փակ բերանով էր։ Դա բացատրում են նրանով, որ շարացանը դաստա կաղմելիս մանգաղով հավաքելու կարիք չէր լինում, ինչպես հատուկ է շաղացանի հնձին։

Տրի խարոռի լծկաններն էին գոմեշը, որ իր դանդաղաշարժության և հեշտ վարժեցնելու համար նախընտրելի էր, և փորձված եզը։ Հորիկը գրեթե բոլոր շարացան վայրերում առանց հոտաղի էր, որովհետև այն երկար ժամանակ վարժեցվում էր։ Ամոլի համար ընտրում էին տարիների փորձ ունեցող և դանդաղաշարժ, իսկ հորիկի համար՝ երիտասարդ ու աշխույժ եզներ։

Տրի ցանքը կատարվում էր աշնան սկզբին, հետևապես բոլոր ցորեններն աշնանացան էին՝ հետևյալ անուններով. տիր (այս անունը պահպանված էր միայն Գնունիք-Թիմարում), ավետիք (Այնթապ), կարմրխատ (Այնթապ, Արծկե), կես-դոգոն-ուշ կալսվող (Արճեշ), կլորախատ կամ բոփբոփիկ (Արճեշ), դարա-ղրշրդ-սեակոուր (Այնթապ, Արճեշ, Արծկե), երոնայեկ (Արճեշ), սիվտրկխատ (Այնթապ, Արճեշ, Արծկե), ֆոիկ-ֆրուրկ ցորեն (Արճեշ, Արծկե)։ Տրի ցանքը կատարվում էր մեծ մասամբ փափուկ, քար չունեցող ավազախառն և գորշագույն հողերում։

Տրի ցանքի համար հողի հերկումը կատարվում էր մայիսի վերջերին կամ հունիսի սկզբներին, վարի խարոռով (II—5)։ Խարոռի վարի խորությունը պետք է հասներ 23—25 սմ, իսկ որոշ պատմողների հավաստմամբ՝ 30 սմ։ Խարոռավարը փափուկ տեղերում կատարվում էր մեկ անգամ, արտի լայնքով (IV—3Ա), իսկ երկու-երեք տարվա խամ արտը հերկելիս կրկնավար էր կատարվում, ըստ որում առաջինը՝ երկայնքով, իսկ երկրորդը լայնքով։ Խարոռավարին, ըստ ընդհանուր սովորության, ամռան կեսերին հաջորդում էր գութանավարը (IV—3Բ)։ Այն կատարվում էր արորավարին հակառակ ուղղությամբ՝ արտի երկայնքով, նախորդից 5—8 սմ պակաս խորությամբ։ Այս երկու վարի շնորհիվ հողում պահպանվում էր խոնավության մի այնպիսի աստիճան, որն անհրաժեշտ էր աշնանացանի սերմերը սնելու համար (տե՛ս գութանավարի ձևն իր կոչումներով, տախտ. IV—1)։ Գութանով կրկնավարն անմիջապես տափանվում էր ցարով, որպեսզի մակերեսը հարթվի և գոլորշիացումը դանդաղեցվի։ Այն կատարվում էր գութանավարին հակառակ, որպեսզի հնարավորին չափ ծածկեր ճեղքերը (IV—3—Դ)։

Տրի ցանքն սկսվում էր օգոստոսի վերջերին, կալսոցի ժամանակ։ Որպես ցանքի առաջին օր, ամենուրեք ընդունված էր աստվածածնի պասին հաջորդող երկուշաբթին։ Վարը կատարվում էր տրի խարոռով, գութանավարին զուգահեռ (IV—3—Դ)։

Տրի խարոռի առատամի, համի և թրի առաջացրած անցքը (I—6) Արծկեում և Այնթապում գանգու (ասպանդակ) էր կոչվում, Թիմարում՝ ախպուր և Արճեշում՝ իսաղինա։ Վարն սկսելուն պես մաճկալը բարձրանում էր խարոռին՝ այսպես. արտի չվարած կողմը մաճկալի ձախին ընկնելիս, նա աջ ոտքը մտցնում էր այդ ասպանդակի մեջ և հենվում առատամին, իսկ ձախ ոտքը դնում էր խարոռի համի վրա, կամ կախում նրանից։ Այս դեպքում մաճին էր հենվում աջ կողքով (I—10)։ Ընդհակառակն, արտի չվարածը մաճկալի աջ կողմն ընկնելիս՝ նա ձախ ոտքն էր հենում առատամին ու աջով հանգչում համին։ Այս դեպքում նա ձախ կողքով էր հենվում մաճին։ Մաճկալը երկու ձեռքով հենվում էր գոմեշների կամ եզների կոնքերին, ինչ որում որոշ տեղերում առանց վարոցի, այլ տեղերում՝ աջ ձեռքում մտրակը կամ ճիպոտը պահած (I—10)։ Տեղավորման այս ձևը հետապնդում էր աշխատանքի համակողմանի ղեկավարումը։

Սովորականից տարբեր էր սերմնացանի աշխատանքի եղանակը։ Ունենալով գոգնոց կամ եռանկյունաձև մի պարկ, որ Խլաթում փաթոց էր կոչվում, նա դրա մեջ լցնում էր այնքան

---

9 Պարորի յուրաքանչյուր գլանն ուներ 120 սմ երկարություն և 10 սմ տրամագիծ։ Պողպատե ատամները, որ երկու ծայրերով էլ ասեղտնման սուր էին, մտցվում էին պարորի մեջ և երկու ծայրերը 3-ական սմ դուրս թողնվում։

Արձեչում տրի տախտակի սերմնազուրկ տարածությունը ցանվում էր 1 կամ 2 բոով, պայմանով, որ հրպոտների թիվը հասներ 5-ի։ Այստեղ ևս առաջին հրպոտը զարնվում էր առջևից դեպի ետ (III—8գ), իսկ մնացածները՝ ետևից առաջ (III—8դ 8ե, 8զ, 8է)։ Այդ բոլորը կատարվում էր 9 կամ 10 ռիթմիկ շարժումով։

Բանն այսպես չէր Գնունիքում։ Այստեղ զարնվում էր միայն մեկ հրպոտ, այն էլ ետևից, այսինքն՝ նախորդ ցանածի սերմնարեբանից դեպի խաբոռի առատամը՝ երկու ռիթմիկ շարժումով (III—10ար)։ Այս բոլորի իրացումն ավելի դյուրին էր կարճահասակ սերմնացանի ձեռքով։ Գործնական կյանքում, անշուշտ, հենց այս էր պատճառը, որ տիր ղեռղ որոշ շրջաններում սերմնացան էին նշանակում պատանիներին կամ նույնիսկ ավելի փոքրերին, սկսած 10—12 տարեկան հասակից, նախնական վարժությունից հետո։ Ժողովրդական հայեցողության տեսակետից էլ պատշաճ էր համարվում, որ սերմնացանը, որը գործ էր ունենալու «եզան արդար վաստակի»՝ ցորենի հետ, լիներ տակավին «աչխարհ չմտած» պատանի։ Իսկ եթե հարկադրված էին սերմնացան դարձնել «աչխարհ մտած» մարդկանց, ապա սովորության խիստ պահանջով նրանք տրի ցանքի ամբողջ ժամանակամիջոցում պետք է ժուժկալ մնային և գիշերները կալերում, ինչ որ պահանջվում էր նաև մահկալիցս։

Ցանքը կատարելուց հետո տրի արտը հետագա մշակման չէր ենթարկվում։ Ակոսների սերմերի համար կարևոր էր հարևան ակոսամիջյան թմբերի պահպանումը որպես ստվերի միջոցով խոնավություն ապահովող և անձրևաջրերը տրի ակոսներում կուտակող միջոցներ։ Պատահում էր, որ տրի հերկի մակերևույթ անձրևային եղանակներին չափից ավելի թրջվում և արևից կոշտանում, կեղևակալում էր։ Տիր ղեկլիս երեսի շերտը մեծ-մեծ կոշտեր էր տալիս, որոնք նստում էին ակոսամիջյան թմբերի վրա։ Այդ կոշտերը թողնում էին մինչև տրի ցանքը ծլելը, մինչև որ կանաչը հասներ 18-20 սմ բարձրության և գերազանցեր թմբերի մակերեսը։ Այսպիսի պարագայում Գնունիքում սովորություն կար անձրևից հետո փխրացած կոշտերը փշրել ցաքով։ Ցաքի շարժումը կատարվում էր ակոսներին զուգահեռ։ Փշրված հողը լցվում էր ակոսների մեջ և երկու կողմից թաղում կանաչը շուրջ 10 սմ չափով։

Տրի բուղը (կանաչը) բարձրանալիս Արծկեում և այլուր ոչխարն ու տավարն արածացնում էին, որպեսզի գարնանը ցողունը «խոտին չտար», այլ լավ «կոուք բռներ»։

Մոտավորապես այս էր դաշտամշակության պատկերն ըստ տրի սիստեմի։

Ասացինք, որ երաշտից քիչ վախեցող այս ցանքը հնձվում էր խիստ ճկված, փակ, կլոր բերան ունեցող մանգաղով (II—5)։ Եթե շաղացանի ցողունն իր ցրվածության պատճառով պահանջում էր բաց լայն բերան ունեցող մանգաղ, որպեսզի վերջինս ի մի հավաքեր դրանը, ապա տրի ակոսինը պահանջում էր փակ, նեղ բերանով մանգաղ, որպեսզի դա նեղ ակոսի ցողունների շերտն իսկույն բուռ-տրցակ դարձներ։ Բերանի փակ լինելն, իհարկե, չէր ենթադրում ամբողջ մանգաղի փոքր լինելը։ Ընդհակառակն, իր մեծությամբ դա հավասար էր շաղացանի մանգաղին։ Բայց կային պատանեկան փոքրածավալ տրի մանգաղներ, որոնց բերանը ևս փակ էր լինում։

Ինչպես որ շաղացանի մանգաղով բավական դժվար էր տրի արտ հնձելը, նույնպես և ավելի դժվար էր տրի մանգաղով շաղացանի արտ հնձելը։ Սակայն կային դյուղեր, որոնք միևնույն մանգաղի մեջ միավորելով թե՛ մեկ և թե՛ մյուս մանգաղի արտարին ձևերը, դրանով հնձում էին ինչպես տրի, այնպես էլ շաղացանի արտերը։

Կար կոլեկտիվ քաղի աշխատանքային հատուկ սիստեմ, սահմանված 2, 3, 4, 5 և 6 հոգու համար, իսկ երբ դրանցից ավելի քաղվորներ էին լինում, ապա 7-ից սկսած մինչև 20 հոգու միաժամանակյա հունձը կատարվում էր 3, 4, 5, 6 մարդկանց խմբով քաղելու սիստեմով, որտեղ կոլեկտիվը ներսում ենթաբաժանումներ էր անում։ Ամեն մի փոքր կամ մեծ կոմպլեքս, որն ուներ իր բուռ կամ խուրձ դարսելու ձևը, հայտնի էր դաստա կամ զազդահ անունով։ Ամեն մի դաղդահի առաջնորդը հոնած էր կոչվում, սրան ձախից հետևողը՝ հոնածախպէր, վերջինը՝ պոչբար, սրա ձախ հարևանը՝ պոչբարախպէր։ Հոնածի և պոչբարախպոր միջև կամ այլ տեղեր ընկած լրացուցիչ քաղվորներն անանուն էին, որը ցույց է տալիս, թե բուն դաստան 4 հոգուց էր բաղկացած։

Գնունիքի Ալյուր գյուղում միայնակ հնձվորն ընթանում էր տրի ցանած ակոսով, որը Իոն[10] էր անվանվում։ Նա մի շնչով առաջանում էր այնքան, որքան թույլ էր տալիս իր ֆիզիկական կարողությունը։

---

[10] Հոն էր կոչվում նաև այն ամբողջ հնձած տարածությունը, որ հասնում էր արտի մի թմբից մյուսը (տե՛ս IV—4 եզրդ և մյուսները՝ նույն տախտակի վրա)։

ՏԱԽ IV



Մի հոգով, թե մեկից ավելի մարդկանցով քաղելիս բուռ-տրցակները միացվում էին կենտրոնական ակոս-հոնի վրա դարսվածներին, ապա՝ խուրձ էր կապվում։

Ինչպես սովորական գաշտամշակության, այնպես էլ արի սիստեմին ներհատուկ էին փոխօգնության ձևերը։ Փոխօգնության այդ ձևերից էին փոխարա-ն *կամ* փոխանակ-ը՝ *վար ու ցանքի, հերկոցի և հնձի ու կալսոցի ժամանակ, և* զուրարա-ն՝ *մասնավորապես հնձի և ապա ուրիշ աշխատանքների գծով*[11]*։ Կար երկու տերմին՝ իրրև կոլեկտիվ աշխատանքի անուն։ Դրանք էին՝* աբակաշ-հարակաշ-հարամաշ-ը *և* աղս-ախս-ախսրնկեր-ախսրնկերութեն-ը։ *Այս երկու*

---

11 *Զուրարա բառը քրդերենում նշանակում է ձրի աշխատություն. դրա փոխհատուցումը պարտադիր չէր։*

տերմիններն էլ նշանակում էին մի տնտեսական ընկերակցություն, որի անդամները միավորում էին իրենց սեփական գործիքները, կամ դրանց մասերը, լծկանները և մարդկային ուժը։

Ինչպես երևում է տրի սիստեմի մեր նկարագրությունից, շարքացան արորը և շարքացան սիստեմը նորագույն գյուտերի թվին չեն պատկանում։ Այդ վերին աստիճանի կուռ, մշակված սիստեմը, անկասկած, դարերի պատմություն ունի։ Ամեն մի հողագործական սիստեմ, իր արտադրամիջոցներով հանդերձ, այդ թվում նաև շարքացան, առավել կատարյալ աստիճանի է հասնում այնտեղ, ուր արդեն գոյություն ունի հողօգտագործման հարուստ փորձ։ Հնարավոր է, որ մեր նկարագրած տրի խառորի հնագույն զուգահեռն է բաբելական արորը։ Պահպանված է դրա նկարը, որտեղ պարզ երևում են՝ բուն արորը, եզները վարող հոտաղը, մաճկալը և սերմնացանը, որը ձագարաձև սարքի մեջ սերմ է լցնում[12]։ Գուցե տրի սիստեմի հնագույն ծագման մասին են խոսում նաև ուրարտական այն երկու երկաթե խոփերը (II—1աբ), որոնք պեղվել են Թոփրախ-կալեում (Վան) և այժմ պահվում են Բեռլինի թանգարանում[13]։ Բ. Բ. Պիոտրովսկին հակված է դրանք համարել գութանների խոփեր կամ ըրիչներ[14]։ Տարբեր մեծության այդ խոփերն ունեն լայնաբերան ծայրեր, որ եթե մի կողմից մաշվելու հետևանք է, ապա մյուս կողմից՝ նախապես այդպես շինված լինելու նշան։ Հետաքրքիր է, որ Վանում լճի ավազանի տրի խառորի խոփերը բավական նման են ուրարտական այդ խոփերին։ Դրանցից մեծ խոփը (II—1ա) նման է Արծկեի, Խլաթի և Թիմարի տրի խոփին (II—2), իսկ փոքրը, որի խոփտումը նման է արդի խոփերի խոփտանը (II—1բ), մասամբ հիշեցնում է Արճեշի տրի խոփը (II—3)։

Ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ հին ջրանցքների լայն ցանց ունեցող տեղերում, հատկապես Շամիրամի ջրանցքի շուրջը, տրի սիստեմն արդեն իրրև վերապրուկ էր գործում գոնե մեր դարի սկզբին, իսկ այնտեղ, ուր ջրանցքաշինություններ բացակայել է կամ ջրանցքները դարերի ընթացքում քայքայման են ենթարկվել, տրի սիստեմը դաշտամշակության ընդունված եղանակ էր։ Բայց կային նաև շրջաններ, ուր ջրովի հողերը վարում էին սովորական գութանով ու արորով և ցանում շաղացանով։ Այդ հողերում տիրը չէր գործում և դրա կարիքը չկար։ Այս էր պատճառը, որ դիմային և ջրովի հողեր ունեցողներն ունենալու էին թե՛ սովորական և թե՛ տրի գործիքներ։ Այս զուգակցման պատճառը տվյալ վայրում անջրդի հողերի գոյությունն էր։ Ասել է, թե ջրովի վայրերին զուգակցող տիրը ևս հին մնացուկ էր։

Տրի սիստեմի վաղնջականության օգտին են խոսում նաև հետևյալ փաստերը.

1. Փակ շեղը ունեցող տրի մանգաղը, որի նմանները մեր հնագիտությանը հայտնի են։ Դրանց մանրախույզ քննությունը ցույց կտար տրի սիստեմի ավելի մեծ տարածվածությունը, քան այժմ մեզ հայտնի է։

2. Տիր ցորենի, տրի խառորի, տիր-ծիր-ակոսի-ի և ամբողջ տրի սիստեմի անունների տառացի համընկնումները Տիր աստվածության անվան հետ, որ բնավ էլ պատահական չէր կարող լինել։

3. Հայոց չորրորդ ամիսը, որ կրում էր «տրէ» կամ «տրեաց» անունը, որը Ալիշանը կապում է Տիր աստվածության անվան հետ[15]։ Եթե հաշվենք, որ նավասարդն սկսվում էր մար-

---

[12] Տե՛ս «Հին աշխարհի պատմություն», հատ. I, Հին Արևելք, Երևան, 1938, էջ 98։ „Народы Передней Азии", Москва, 1957, էջ 508։ Б. Б. Пиотровский, Ванское царство, Москва, 1959, էջ 141։

[13] C. F. Lehmann-Haupt, Armenien Einst und Jetzt. II B. Materialen zur älteren Geschichte Armeniens und Messopotamiens, Berlin. 1907, էջ 547։

[14] Հեղինակը, անկասկած, գութան բառն այստեղ գործածում է արոր իմաստով, որովհետև Ուրարտուում և նրա հասարակական զարգացման աստիճանի վրա կանգնած որևէ պետության մեջ արդի իմաստով գութան չի եղել (տե՛ս „Ванское царство", էջ 141)։ Սակայն ուրարտական փոքր խոփը (II—1բ) կարող էր լինել նաև ըրիչ, ինչպես որ կռահել է Բ. Բ. Պիոտրովսկին (տե՛ս նույն տեղում)։ Այդօրինակ գործիք է գտնված նաև Կարմիր-բլուրում, որը Հարություն Մարտիրոսյանը ըրիչ է անվանում (տես А. Мартиросян, Город Тейшебаини. Ереван, 1961, էջ 97—98)։ Այդպիսի ըրիչների այլափոխությունները մեզ հայտնի են Լոռի-Փամբակից, որոնք հարատևեցին մինչև XIX դ. վերջը։ Ուրարտական փոքր խոփի ձևի ըրիչը ծանոթ էր նաև Սև ծովի հյուսիսային ափերին (տես В. Д. Блаватский, Земледелие в античных государствах Северного Причерноморья, Москва, 1953, էջ 108)։

[15] Տես Ալիշան. Հին հավատք, էջ 110։

տին, ապա տրէ ամիսը համապատասխանում է հունիսին։ Իսկ վերջինս տրի հերկոցի ամիսն էր, երբ խոնավության պահպանման համար գործնական պայքար էր տարվում։

Քանի որ տիր դնելու սիստեմն իր տերիտորիալ տարածականությամբ ընդգրկում էր Վանա լճի ավազանը, տրի սիստեմն առավել հանգամանորեն ուսումնասիրելը կարևոր նշանակություն կունենար ուրարտական և հայկական երկրագործության ավանդների միջև պատմական կապեր որոնելու և մեր անցյալի հողամշակման ձևերը գիտության սեփականությունը դարձնելու տեսակետից։

Վ. ԲԴՈՅԱՆ

«ՁԳՈՆ» ԿՈՉՎԱԾ ԳՐՔԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԱՐՑԸ

Ասորական գրականության բուն արշալույսին մենք հանդիպում ենք մի նշանավոր գրվածքի, ասորական տառերի թվով կազմված 22 (հետագայում ավելացրած է ևս մեկը) ճառերի, խրատական հորդորների կամ քարոզների, որոնք կոչվում են նաև նամակներ։ Այդ ճառերի հեղինակ էր համարվում, հիմնվելով հինգերորդ դարի գործիչ Գեննադիոս Մարսելյու հեղինակության վրա, Մծբինի եպիսկոպոս Հակոբը, իր ժամանակին մի շատ հայտնի անձնավորություն, որ մասնակցել էր 325 թվականի Նիկիո տիեզերական ժողովին և արիոսականության դեմ հանդուգն պայքարողի համբավ էր վայելում։ Այս կարծիքը ավելի ևս հաստատվեց, երբ 1756 թվականին Նիկ. Անտոնելլին հրատարակեց այդ ճառերի հայերեն բնագիրը լատիներեն թարգմանությամբ, ծանոթագրություններով ու բացատրություններով[2]։ Հետագայում 1824 թվականին Պոլսում լույս ընծայվեց նույն գրվածքի միայն հայերեն բնագիրը հետևյալ վերտառությամբ.

Գիրք որ կոչի Զգոն արարեալ սրբոյն Յակովբայ երիցս երանելւոյ Հայրապետին Մծբին քաղաքի՝ ըստ խնդրոյ սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին, սակս մանկանց նորոյս Սիոնի (VI+430 էջ)։

Դժբախտաբար, հայերեն բնագիրը լրիվ չէր։ Այն պարունակում էր, փոքր-ինչ տարբեր դասավորությամբ, առաջին 19 ճառերը և չուներ վերջին չորսը (20—23), որոնցից վերջին երկուսը շատ կարևոր էին երանցում հիշատակված ժամանակագրական ակնարկների պատճառով։ Հին հայերեն բնագրում էլ, էջ 394, պահված էր թղթերից մեկի գրության հիշգրիա տարեթիվը, որով միանգամայն պարզվում էր տեղի ունեցած երկու տարբեր անձնավորությունների շփոթումը և թղթեն անանկիորեն Մծբնա Հակոբ եպիսկոպոսին վերագրելը, սակայն, անհասկանալի պատճառներով, գիտական հետազոտողները այդ տվյալի վրա ուշադրություն չդարձրին և հաստատություն գտավ այն սխալ կարծիքը, թե հիշված 23 թղթերի հեղինակը Հակոբ Մծբնա հայրապետն է, ուրիշ խոսքով այն ժամանակվա համար մի ավելի պակաս հայտնի կամ գրեթե անհայտ անձի գրվածքը վերագրվեց մի ավելի հայտնի նույնանուն անձնավորության։

Զարմանալի վայր է սկսվել անձնավորությունների այդ շփոթումը հատկապես նաև հայոց գրականության մեջ։ Այդ շփոթման ու սխալի առաջին արտահայտությունը գտնում ենք Փավստոս Բուզանդի Հայոց պատմության մեջ (գրքույկ III, գլուխ 10)։ Այնտեղ կարդում ենք հետևյալը.

«Զայնու ժամանակաւ խաղաց գնաց մեծ եպիսկոպոսն Մծբնացւոց, այր սքանչելի ծերունի, վաստակաւոր ի գործս Աստուծոյ եւ նոր Յակոբ, փոխանակ ազգաւն Պարսիկ կոչէր, այր ընտրեալ յԱստուծոյ...»։

Բոլորովին անորոշ, կարելի է ասել անհասկանալի է «փոխանակ ազգաւն Պարսիկ կոչէր» արտահայտությունը։ Փավստոսի գերմաներեն թարգմանիչ Մ. Լաուերը գժվարության տակից դուրս է եկել նրանով, որ համապատասխան տեղը թարգմանել է „anstatt nach seiner Familie der Perser hieß»—«փոխանակ ըստ իր ազգանվան (կոչվելու)՝ Պարսիկ էր կոչվում»[3]։ Լաուերը հաշվի չի առել, որ եպիսկոպոսներն առհասարակ ազգանունով չեն կոչվում, այլ այն-

[1] „De viris illustribus" գրվածքում, որը գրված է 496 թվականից առաջ։

[2] Nic. Antonelli, Sancti patris nostri Jacobi Episcopi Nisibeni Sermones, Romae, 1756.

[3] Des Faustus von Byzanz Geschichte Armeniens, von Dr. M. Lauer, Köln, 1879, 3. Buch, 10 Kapitel.